ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 27 » դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-36/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13699-15 գրությամբ ներկայացված «Դան Որդիներ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 07616749) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.05.2015թ. թիվ 1/73-1/13699-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դան Որդիներ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա-

կիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Դան Որդիներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 02.06.2015թ. թիվ 01/04.1/1213-15 գրությամբ դիմել է «Դան Որդիներ» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

3. ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.05.2015թ. թիվ ԱԿ/5966-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Դան Որդիներ» ՍՊԸ-ի միջև 18.03.2015թ. կնքված «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով պայմանագիրը 2015թ. մայիսի 1-ին լուծվել է, որի համար հիմք է հանդիսացել «Դան Որդիներ» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը և պայմանագրի ապահովման գումարի փոխանցումը՝ կից ներկայացնելով նշված գումարի վճարումը հավաստող 08.05.2015թ. թիվ 4529 վճարման հանձնարարականի պատճենը:

4. ՍՑ-ԳԲԽ-36/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13699-15 գրությամբ «Դան Որդիներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից սեղմված բնական գազի բալոնների լիզքավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի 5-րդ՝ «սեղմված բնական գազ 5» չափաբաժնին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Դան Որդիներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի արդյունքում, ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Դան Որդիներ» ՍՊԸ-ի միջև 18.03.2015թ. կնքվել է սեղմված բնական գազի բալոնների լիզքավորման ծառայությունների ձեռքբերման «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

3. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 5-րդ չափաբաժնով սահմանված «սեղմված բնական գազ 5» գնման առարկան նախատեսվում է ձեռք բերել 2015թ.-ին, մասնավորապես, 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում, իսկ 4-րդ եռամսյակում՝ ապրանքների մատակարարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

4. Պայմանագրով նախատեսված ապրանքն Ընկերության կողմից մատակարարվել է՝ ըստ Պատվիրատուի փաստացի պահանջի՝ 30.04.2015թ. (հիմք՝ 30.04.2015թ. հաշիվ-ապրանքագիրը):

5. Ընկերությունը, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ 2015թ. մայիսի 1-ից «Դան Որդիներ» ՍՊԸ-ն դադարեցրել է իր գործունեությունը, հետևաբար պայմանագրային պարտավորությունը չի կարող կատարել և խնդրում է Պայմանագիրը համարել լուծված:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ Պայմանագրից հրաժարվելու համար «Դան Որդիներ» ՍՊԸ-ի կողմից վճարվել է 117460 ՀՀ դրամի

չափով տույժ՝ կից ներկայացնելով նշված գումարի վճարումը հավաստող 08.05.2015թ. թիվ 4529 վճարման հանձնարարականի պատճենը:

6.Պատվիրատուն 14.05.2015թ. թիվ 162/44 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Դան Որդիներ» ՍՊԸ-ի միջև 2015թ. մարտի 18-ին կնքված Պայմանագիրը 2015թ. մայիսի 1-ին լուծվել է, որի համար հիմք է հանդիսացել «Դան Որդիներ» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը և պայմանագրի ապահովման գումարի փոխանցումը:

7. Պատվիրատուն 11.12.2015թ. թիվ N 23237-15 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ Ընկերությունը Պայմանագրի շրջանակներում մատակարարել է 109,000.22 ՀՀ դրամի 546 խմ. սեղմված բնական գազ: Մատակարարված ապրանքի ծավալը համապատասխանել է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջին:

Փաստացի մատակարարված ապրանքի ծավալների պայմանագրով 2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների համար նախատեսվածից ցածր լինելու հանգամանքը բացատրվում է Պատվիրատուի մոտ նշված ժամանակահատվածում տվյալ ապրանքի իրական պահանջարկի նվազմամբ, ինչը կանխատեսել հնարավոր չէր:

Պատվիրատուն նույն գրությամբ հայտնել է, որ «Դան Որդիներ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով պայմանագիը լուծվել է՝ Ընկերության տնօրենի դիմումի և պայմանագրի ապահովման գումարի փոխանցման հիմքով:

5. ՍՑ-ԳԲԽ-36/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13699-15 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 14.05.2015թ. թիվ 162/44, 27.05.2015թ. թիվ ԱԿ/5966-15 և 11.12.2015թ. թիվ N 23237-15 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընկերության

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ուղղված գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և ***լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ***ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սեղմված բնական գազի բալոնների լիցքավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է նույն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է նույն Պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունն էականորեն խախտել է նույն

Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Դան Որդիներ» ՍՊԸ-ի միջև 18.03.2015թ. կնքվել է սեղմված բնական գազի բալոնների լիզքավորման ծառայությունների ձեռքբերման «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով պայմանագիր, որին կից N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 5-րդ չափաբաժնով սահմանված «սեղմված բնական գազ 5» գնման առարկան նախատեսվում է ձեռք բերել 2015թ.-ին, մասնավորապես, ***1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում, իսկ 4-րդ եռամսյակում՝*** ապրանքների մատակարարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված ապրանքն Ընկերության կողմից մատակարարվել է՝ ըստ Պատվիրատուի փաստացի պահանջի՝ 30.04.2015թ. (հիմք՝ 30.04.2015թ. հաշիվ-ապրանքագիրը), ինչը հաստատվել է նաև Պատվիրատուի 11.12.2015թ. Կենտրոնին ուղղված թիվ 23237-15 գրությամբ, որով վերջինս հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում 109,000.22 ՀՀ դրամի 546 խմ. ծավալի «Սեղմված բնական գազ» ապրանքի մատակարարումը, համապատասխանել է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջին:

Պայմանագրով փաստացի մատակարարված ապրանքի ծավալների 2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների համար նախատեսվածից ցածր լինելու հանգամանքը բացատրվում է Պատվիրատուի մոտ նշված ժամանակահատվածում տվյալ ապրանքի իրական պահանջարկի նվազմամբ, ինչը կանխատեսել հնարավոր չէր:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով 1-ին և 2-րդ եռամսյակների համար նախատեսված քանակության ծառայությունն ըստ էության մատուցել է 30.04.2015թ.-ին, այն է՝ 2-րդ եռամսյակում, այնուամենայնիվ գտնում ենք, որ Ընկերության կողմից

այս մասով թույլ չի տրվել պայմանագրով ստանձնած 1-ին եռամսյակի համար նախատեսված պարտավորության խախտում, քանի որ, համաձայն Պայմանագրի 1.2 կետի՝ Ընկերությունը ծառայությունը մատուցել է նույն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան՝ պայմանագիրը կնքելու օրվանից՝ 18.03.2015թ.-ից հաշված երեսուն աշխատանքային օրում՝ 30.04.2015թ.-ին:

Հետևաբար, Ընկերության կողմից, Պայմանագրով 2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների համար նախատեսվածից ցածր ծավալներով ծառայություն մատուցելու հանգամանքը բացատրվում է Պատվիրատուի մոտ ***նշված ժամանակահատվածում տվյալ ծառայության իրական պահանջի նվազմամբ, ինչն ըստ Պատվիրատուի, կանխատեսել հնարավոր չէր:***

Սակայն Ընկերությունը, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ուղղված գրությամբ հրաժարվել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների հետագա կատարումից, այն է՝ հրաժարվել է 3-րդ եռամսյակում 1400 խմ և 4-րդ եռամսյակում 1673 խմ ծավալներով «Սեղմված բնական գազ»-ի լիցքավորման ծառայություն մատուցելուց, որի արդյունքում Պատվիրատուի կողմից «Դան Որդիներ» ՍՊԸ-ի հետ 18.03.2015թ. կնքված «ԲԸԱՀ-ՀՎԿԱԿ-2015-03-05» ծածկագրով պայմանագիրը 2015թ. մայիսի 1-ին լուծվել է:

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերությունը 3-րդ և 4-րդ եռամսյակների համար նախատեսված ծառայությունը մատուցելուց հրաժարվելով՝ թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված ավելի քան մեկ անգամ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի լուծմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Կենտրոնն արձանագրում է, որ «Դան Որդիներ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն ***Ընկերությանը*** Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-36/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից հաշված ***(01.05.2015թ.)*** մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Նման պայմաններում խախտումը թույլ տալու պահից **(01.05.2015թ.)** հաշված մեկ տարվա ընթացքում «Դան Որդիներ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-36/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Դան Որդիներ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 01.05.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13699-15 գրությամբ ներկայացված «Դան Որդիներ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 07616749) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-36/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան